

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, ՄԱՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԱՑ, Աշխատասիրութեամբ՝ ՀԱՅՐԱՊԵՏ Գ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1983 (140 էջ):

Միջնադարու ամենէն նշանաւոր, բազմամարդ ու բազմազգ քաղաքներէն՝ Անի մայրաքաղաքի մասին իւրաքանչիւր տեղեկութիւն, պատմական ու մատենագրական աղբիւր, խիստ կարեւորութիւն ունի ոչ միայն Հայաստանի, Վրաստանի, այլեւ ամբողջ կովկասի ու Բիզանդական կայսրութեան պատմութեան համար: Այս տեսանկիւնէն՝ Մխիթար Անեցիի «Մատեան Աշխարհավէպ Հանդիսարանաց» երկի գիտական հրատարակութիւնն ու այդ մասին գրուած ուսումնասիրութիւնը օգտաշատ գործ մըն է, մասնաւորաբար հայագիտութեան եւ կովկասագիտութեան համար:

Աշխատութեան հեղինակը առանձին-առանձին կը քննէ Մխիթար Անեցիի կեանքին ու երկերուն հետ կապուած գրեթէ բոլոր հարցերը: Հ. Մարգարեան յատկապէս ուշադրութեան առարկայ կը դարձնէ Մխիթար Անեցիի գրիչին արդիւնք՝ միջնադարուն բաւական յայտնի դարձած Արեգակի եւ Լուսնի խաւարումներու մասին բացատրութիւններ տուող

պարսկերէն աստղագիտական երկին թարգմանութիւնը: Հեղինակը կը քննարկէ Անեցիի կատարած թարգմանութեան հետ առնչուող ցարդ յայտնուած կարծիքներն ու ենթադրութիւնները՝ յատկապէս ծանրանալով խորհրդաւոր «Ոճիէ», «Յոճիէ», «Ոճիքէ» բառերու ծագումնաբանութեան խնդրին: Ինչ կը վերաբերի «Պատմութիւն Յանւոյ Քաղաքին» երկի Մխիթար Անեցիի պատկանելու հարցին, Հայրապետ Մարգարեան կը գտնէ որ կազմող-հեղինակը օգտուեր է այլ հեղինակներու գործերէն, եւ սոյն երկը քաղազրութիւն մըն է: Այս մասին «Յաւելուած» բաժնին մէջ (էջ 123-124) հեղինակը աւելի մանրամասնօրէն ցոյց կու տայ աղբիւրները:

«Մատեան Աշխարհավէպ Հանդիսարանաց»-ի մեզի հասած մասը խիստ արժէքաւոր տեղեկութիւններ կը հաղորդէ հայոց, վրաց, պարսից եւ արաբներու մասին: Անոր արժէքը առաւել եւս կ'իմաստաւորուի նաեւ այն բանի շնորհիւ, որ մեզի հասած հատուածը հիմնուած է մեծ մասամբ Խորենացիի, ապա նաեւ մասամբ՝ Փարպեցիի, Սերէոսի, Դրասխանակերտցիի եւ այլոց երկերու փոխանցած տեղեկութիւններուն վրայ: Այս հանգամանքն ալ ինքնին կ'օգնէ այսօրուայ բանասէրին համեմատելու եւ վերականգնելու նախորդ մատենագիրներու կարգ մը տեղեկութիւնները:

Հ. Մարգարեան կ'անդրադառնայ նաեւ Մխիթար Անեցիի պատմագիտական հայեացքներուն եւ պատմահայեցողական ակունքներուն: Հեղինակը ճիշդ կերպով կը նկատէ որ տակաւին թերի են մեր իմացութիւնները՝ միջնադարեան հայ պատմիչներուն պատմագիտական հայեացքներուն վերաբերեալ, ուստի՝ աշխատութեան հեղինակը խորապէս ուսումնասիրելէ ետք հրատարակուող երկը, բանասէրին ու պատմաբանին ուշադրութեան կը յանձնէ Մխիթար Անեցիի պատմահայեցողութիւնը: Այստեղ կ'իմանանք թէ Մխիթար Անեցին «չեչտում է պատմութեան հսկայական ճանաչողական արժէքն ու նշանակութիւնը, այն, որ պատմութիւնը լուսաւորում է մարդկանց ու ծանօթացնում գիտութեանը, պատմութեան մէջ անզրապատկերուելով են յաւերժանում լաւն ու բարին. պատմութիւնն է անցեալի փորձի հիման վրայ դժուարութիւնները յաղթահարելու ուղիներ յուշում» (էջ 40):

Հայագէտ-կովկասագէտ Հ. Մարգարեան ժե. դարէն հասած ձեռագրի օրինակի վրայ, բանասիրական-աղբիւրագիտական հմուտ ուսումնասիրութեան շնորհիւ հրատարակել է քննական բնագիր, որ անկասկած աւելի ընդունելի է քան հարիւր տարի առաջ Քերովըէ Պատկանեանի պատրաստած հրատարակութիւնը: